ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ,ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ ՎԱՀԱԳՆ ԳԱՌՆԻԿԻ

ՀԱՆՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (ԸՆԴԵՐՔԻ ԵՎ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Ը. 00.02. - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2020

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝	**տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Խաչատուրի Մարկոսյան**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Դավիթ Ներսիկի Հախվերդյան**
	տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Բելլա Վալերիի Գաբրիելյան**
Առաջատար կազմակերպություն՝	**ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2020թ. մայիսի 22-ին, ժամը 13:30-ին, Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0009, ք. Երևան, Աբովյան փող. 52

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2020թ. ապրիլի 11-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
Տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝

Ա.Հ.Առաքելյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում հրատապ է հանրային կյանքի բոլոր բնագավառներում համակարգային փոփոխությունների պահանջը: Այդ առումով պատահական չէ ՀՀ նոր իշխանության կողմից երկրում տնտեսական հեղափոխությունն[1] օրակարգային դարձնելը: Իսկ վերջինս նախ և առաջ նշանակում է արմատական վերափոխումներ կառավարման ամբողջ համակարգում, նպատակ ունենալով բարձրացնել դրա արդյունավետությունը և ներառականությունը, որդեգրելով կառավարման նոր մոտեցումներ ու սկզբունքներ: Այլ կերպ ասած, կարևոր է դառնում հանրային ռեսուրսների, և առաջին հերթին մարդկային ու բնական կապիտալների կառավարման արդյունավետությունը, որն էլ իր հերթին կկանխորոշի տվյալ երկրի զարգացման հաջողությունները տվյալ ժամանակաշրջանում և ապագայում: Հայաստանի Հանրապետության համար նշված խնդիրը ավելի է կարևորվում, հաշվի առնելով գոյություն ունեցող բնական սահմանափակումները՝ տարածքը, սահմանափակ բնական ռեսուրսները, փոքր տնտեսությունը, ներքին շուկայի չափերը, դեպի ծով մուտք չունենալը և այլն: Առաջընթաց ունենալու պահանջը ստիպում է անցնել ռեսուրսների կառավարման առավել արդյունավետ համակարգի:

Ինչպես վկայում է համաշխարհային փորձը, հաջողություն են ունենում այն երկրները, որոնք կարողանում են ստեղծել կառավարման այնպիսի համակարգ, որտեղ իրենց մասնակցությունն են ունենում հասարակության բոլոր հանրային ինստիտուտները և շերտերը՝ պետությունը, քաղաքացիները, քաղաքացիական հասարակությունը, քաղաքական և հասարակական կազմակերպությունները: Հաջողությունը պայմանավորված է լինելու գործընթացների կառավարման նորովի մոտեցումներից, ինչպես նաև դրանք կիրառելու հետևողականությունից: Թվարկածին պետք է ավելացնել նաև ՀՀ քաղաքացու վարքագծի, դեռևս խորհրդային ժամանակներից մնացած պետական ինստիտուտների նկատմամբ մոտեցումների արմատական փոփոխության անհրաժեշտությունը:

Հայաստանի Հանրապետությունում տնտեսական հեղափոխության տրամաբանության շրջանակներում իրականացվող արմատական վերափոխումները միտված են հանրային ռեսուրսների կառավարման արդյունավետ համակարգի ստեղծմանը: Այդ աշխատանքներն արդարացված կլինեն և կտան սպասված արդյունքները, եթե լինեն թափանցիկ, գիտականորեն հիմնավորված և վերահսկելի:

Վերը նշված հարցադրումները պահանջում են իրականացնել կոնկրետ քայլեր ու գործողություններ, տալ համապատասխան լուծումներ, որոնց բացահայտումն ու առաջադրումն էլ ատենախոսության ընտրված թեման արդիական են դարձնում:

[1] «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի N 65-Ա որոշումը, ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2019թ.-ի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ:

Ուսումնասիրության օբյեկտը և առարկան: Ուսումնասիրության օբյեկտը Հայաստանի Հանրապետության հանրային ռեսուրսների կառավարման համակարգն է, իսկ ուսումնասիրության առարկան՝ հանրային ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացման տնտեսահիրավական կարգավորումներն են և դրանց բարելավման ուղիների մշակումը՝ ընդերքի (հիմնականում մետաղական հանքավայրերի) ու ջրային ռեսուրսների օրինակով:

Ուսումնասիրության նպատակը և հիմնախնդիրները: Ուսումնասիրության նպատակն է բացահայտել ՀՀ-ում հանրային ռեսուրսների կառավարման արդի հիմնախնդիրները, ինչպես նաև ներկայացնել առաջարկություններ հանրային ռեսուրսների կառավարման բարելավման ուղիների վերաբերյալ:

Նշված նպատակին հասնելու համար ատենախոսությունում դրվել և լուծվել են հետևյալ հիմնախնդիրները՝

- ուսումնասիրել պետության՝ որպես հանրային հիմնական ինստիտուտի, դերի ժամանակակից ընկալումները և քննարկել պետություն և շուկայի փոխառնչությունների ինստիտուցիոնալ հիմքերը,
- դիտարկել ՀՀ տնտեսական անվտանգության հիմնախնդիրները պետություն-շուկա հարաբերությունների համատեքստում, առաջարկել և հիմնավորել տնտեսական անվտանգության որոշարկման այնպիսի մոտեցում, որը հնարավորություն կտա ներդաշնակեցնել պետության և շուկայի գործառույթները,
- ներկայացնել առաջարկի և պահանջարկի կարգավորման առանձնահատկություններն ու դրանց դրսևորումները Հայաստանի Հանրապետությունում,
- վերլուծել հանքարդյունաբերությունը՝ որպես հանրային ռեսուրսների օգտագործման առանձահատուկ ոլորտ և դիտարկել դրա ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա,
- վերլուծել ՀՀ ջրային ռեսուրսների օգտագործման վիճակը և բացահայտել այդ ոլորտում առկա հիմնախնդիրները,
- գնահատել տնտեսության կառուցվածքային տեղաշարժերը և զարգացման միտումները,
- բացահայտել ընդերքօգտագործման արդյունավետության բարձրացման հիմնական ուղիները և ներկայացնել առաջարկություններ,
- առաջարկել ջրային ռեսուրսների և համակարգերի կառավարման կատարելագործման հիմնուղիները:

Ուսումնասիրության տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը: Ատենախոսության համար տեսական հիմք են հանդիսացել պետական կառավարման համակարգում հանրայի ռեսուրսների վերաբերյալ հայրենական և արտասահմանյան տնտեսագետների կողմից կատարված վերլուծությունները, հրապարակումները, հետազոտությունները, ինչպես նաև գիտագործնական նշանակություն ունեցող հիմնադրույթները:

Ուսումնասիրության համար անհրաժեշտ տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ օրենքները, ՀՀ կառավարության ու հայեցակարգերն ու որոշումները , ՀՀ Վիճակագրական կոմիտեի(ՎԿ), պետական կառավարման մարմինների պաշտոնական տվյալներն ու հրապարակումները, Համաշխարհային բանկի, միջազգային այլ կազմակերպությունների զեկույցները, հաշվետվություններն ու պաշտոնական վիճակագրությունը:

Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են վիճակագրական, համեմատական, խմբավորումների և վերլուծության ու ամփոփումների մեթոդները:

Ուսումնասիրության հիմնական գիտական արդյունքները և նորույթը: Ուսումնասիրության արդյունքում ստացվել են գիտա-գործնական նշանակության արդյունքներ, որոնց գիտական նորույթը կայանում է հետևյալում՝

1. հիմնավորվել է Հայաստանի Հանրապետությունում պետություն-մասնավոր գործընկերության շրջանակների ընդլայնումը՝ հիմք ընդունելով «պետությունը գործում է այնտեղ (այն ոլորտներում), որտեղ մասնավորին ձեռնտու չէ» մոտեցումը, այդպիսով հասնելով հանրային ռեսուրսների կառավարման լավագույն հարաբերակցության ձևավորման և, որպես հետևանք՝ արդյունավետության բարձրացման,

2. հիմնավորվել է, որ ներկայումս Հայաստանի Հանրապետությունում տնտեսական քաղաքականության նախապատվությունը պետք է տրվի առաջարկի տնտեսագիտությանը, ինչը կնպաստի ինչպես տնտեսական ակտիվության, այնպես էլ ներդրումային միջավայրի բարելավմանը,

3. առաջարկվել է հանքարդյունաբերության ոլորտում կիրառել «աղտոտողը վճարում է» սկզբունքը, ինչը գործնականում նշանակում է տնօրինման ու օգտագործման տրամադրվող ընդերքի գնագոյացման հաշվարկներում ներառել նաև շրջակա միջավայրին հասցված վնասի և դրա վերականգնման հետ կապված ծախսերը՝ տնտեսական արդյունավետության և բնապահպանական հավասարակշռության պահպանման նպատակով,

4. առաջարկվել է պետական սեփականություն հանդիսացող ջրային համակարգերի կառավարման ՀՀ ջրային օրենսգրքով նախատեսված ձևերից (հավատարմագրային կառավարում, կոնցեսիա, վարձակալություն, առևտրային կազմակերպության ստեղծում, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրում) բացի նախատեսել նաև նոր ձևեր՝ «կառուցում – տիրապետում – կառավարում – փոխանցում», «կառուցում – կառավարում – տիրապետում» կամ «կառուցում – վարձակալում – տիրապետում», ինչպես նաև ջրային համակարգերի տրամադրում համայնքների՝ բաժնային մասնակցության սկզբունքով, առանց դրանցից որևէ մեկին նախապատվության իրավունք տալու՝ ապահովելով նշված ձևերի միջև ազատ մրցակցություն, ինչը որոշակի ժամանակահատվածից հետո կհանգեցնի օպտիմալ հարաբերակցության՝ ելնելով առաջարկի և պահանջարկի սկզբունքից:

Ուսումնասիրության արդյունքների գիտագործնական նշանակությունը և օգտագործումը: Իրականացված վերլուծություններից բխող առաջարկությունները,

ինչպես նաև հանրային ռեսուրսների կառավարման բարելավման հիմնախնդիրների լուծման համար առաջարկված միջոցառումները կարող են օգտագործվել ՀՀ օրենսդիր և գործադիր մարմինների կողմից՝ հանրային ռեսուրսների կառավարման համակարգում կառավարման արդյունավետության բարձրացման, արդյունավետության գնահատման մեթոդաբանության և արդյունավետության ցուցանիշների սահմանման աշխատանքներում: Դրանք կարող են օգտակար լինել ձեռնարկատիրական գործունեության և պետության կառավարման հատվածներում հանրային ռեսուսրների կառավարման հիմնախնդիրներով հետաքրքրվող տնտեսագետների ու այլ հետազոտողների համար:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության հիմնադրույթները և ստացված արդյունքները քննարկվել են Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Նորարարության տնտեսագիտության» և «Կառավարման և գործարարության» ամբիոնների համատեղ նիստում, 2019թ.-ի սեպտեմբերի 12-15-ը Ստեփանակերտում կազմակերպված «Հայոց պետականության անցյալը, ներկան ու ապագան» միջազգային երիտասարդական և 2019թ.-ի հոկտեմբերի 8-9-ին ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հիմնադրման 25-ամյակին նվիրված «Կառավարման ժամանակակից հիմնախնդիրները» 2-րդ միջազգային գիտաժողովներում, 2019թ.-ի նոյեմբերի 12-14-ին Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի «Աղետների ռիսկի կառավարման արդիական հարցեր» խորագրով միջազգային գիտաժողովի ընթացքում: Ատենախոսության հիմնական արդյունքներն ու բովանդակությունը արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված 6 (վեց) գիտական հոդվածում և մենագրությունում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության տեքստը շարադրված է 180 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը, առանց հավելվածների:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը, կիրառման ոլորտները, ձևակերպված են հետազոտության նպատակն ու հիմնախնդիրները, տրված են հետազոտության առարկան և օբյեկտը, ներկայացված են հետազոտության հիմնական արդյունքներն ու գիտական նորույթը, դրանց գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ **«Պետության և շուկայի փոխառնչությունները հանրային ռեսուրսների կառավարման համատեքստում»** գլխում ուսումնասիրվել են

պետության դերի ժամանակակից ընկալումները, պետություն և շուկայի փոխառնչությունների ինստիտուցիոնալ հիմքերը, երկրի տնտեսական անվտանգությունը «պետություն-շուկա» հարաբերությունների համատեքստում:

Պետության դերի վերաբերյալ ընկալումները տնտեսության զարգացման բոլոր ժամանակահատվածներում ամենապահանջված, ամենաքննարկվող, ուստի և ամենաքննադատվող հիմնահարցերից է, որի վերջնական և ամբողջական պատասխանը մինչ օրս տրված չէ: Ինչպես նշում է տնտեսագիտության ոլորտում Նոբելյան մրցանակակիր Դ. Նորթը. «...Մյուս կողմից, համաշխարհային պատմության մեջ տևական ժամանակ պետության հարկադրանքի ուժն օգտագործվել է այնպիսի եղանակներով, որոնք հակասում էին տնտեսական աճի ապահովման տրամաբանությանը: Այնուամենայնիվ, մարդկանց միջև բարդ փոխգործակցությունը դժվար է պահպանել առանց երրորդ ուժի կիրառման, որը պետք է հետևի թե ինչպես են կողմերը կատարում պայմանագրերի դրույթները: Տնտեսության մեջ պետության անհրաժեշտության մասին հարցի քննարկման համար, որն առանցքային նշանակություն ունի մարդկության հիմնախնդիրների լուծման գործում, պատմության դատարանը գնացել է խորհրդակցական սենյակ և դեռևս չի վերադարձել»[2]:

Պետության մասին պատկերացումները պետության ձևավորումից մինչ օրս անընդհատ փոփոխությունների են ենթարկվում՝ պայմանավորված պետության և շուկայի փոխգործակցման առաջադեմ և առավել արդյունավետ մոդելների ընտրությամբ:

Պետության համար գլխավոր գործառույթների հարցում միանշանակ մոտեցում գոյություն չունի, սակայն քիչ թե շատ ընդունելի է այդ գործառույթները երկու մեծ խմբով ներկայացնելը: Առաջինը ներառում է գործունեության այնպիսի տեսակներ, որոնք ուղղված են անձի և նրա սեփականության պաշտպանությանը բռնությունից, գողությունից և այլն, իսկ երկրորդը ենթադրում է քաղաքացիներին որոշակի սահմանափակ թվով բարիքների[3] տրամադրում. բարիքներ, որոնց արտադրությունն այս կամ այն պատճառով շուկայի համար դժվար է կազմակերպել (հանրային բարիքներ):

Կարևոր հարց է նաև, թե հանրային բարիքները ո՞վ պետք է ապահովի: Արդյո՞ք այդպիսի բարիքներ կարող է տրամադրել միայն պետությունը, թե գոյություն ունի այլընտրանքային մոտեցում: Ժամանակի ընթացքում հանրային բարիքների տրամադրման տնտեսական սահմանափակումները վերանում են: Քննական վերլուծությունը ցույց է տալիս, որ հանրային բարիքների մատուցման, տրամադրման սահմանափակումները վերանում են, գնալով պետական-մասնավոր սահմանն ավելի ու ավելի պայմանական է դառնում և միայն պետությանը դրանք վերագրելը մնացել է

---

[2] Норт Д. Институты, институциональные изменения и функционирование экономики, Пер. с англ. А.Н. Нестеренко; предисл. и науч. ред. Б.З. Мильнера. - М.: Фонд экономической книги Начала, 1997, стр 21. https://litresp.com/chitat/ru/%D0%9D/nort-duglas/instituti-institucionaljnie-izmeneniya-i-funkcionirovanie-ekonomiki

[3] Նկատենք, որ բարիք է ցանկացած բան, որի շատը գերադասելի է քչից: Տե՛ս Հեյնե Պ., Պիտեր Բ., Պրիչիտկո Դ. Տնտեսագիտական մտածելակերպ, հ. 2, Եր., «Էդիթ Պրինտ», էջ 300:

անցյալում: Այս պարագայում ընտրության միակ չափանիշ կարող է լինել հանրային ռեսուրսների կառավարման արդյունավետությունը՝ լայն իմաստով:

Հեղինակի անդրադարձը հանրային ռեսուսներին ելնում է հենց վերը նշված տրամաբանության շրջանակներում՝ պետության և շուկայի փոխառնչություններից: Եվ հենց վերջինիս ժամանակակից դրսևորումներով են պայմանավորված լինելու հանրային ռեսուրսների կառավարման արդյունավետությունը, դրա բարելավման ուղիները կամ հնարավորությունները:

Կարևորելով պետական կառավարումը՝ նշենք նաև, որ ներկայումս երկրները սկսում են մրցակցել պետական կառավարման մոդելների կիրառման, ինստիտուտների ստեղծման և կատարելագործման հարցում, և ոչ թե աշխատուժի գնի, հարկային, կամ մրցակցության քաղաքականությամբ: Ավելացնենք, որ ժամանակակից տնտեսության վերաբերյալ հիմնական վեճը նրա մասին չէ թե ինչպիսին է նրա կառուցվածքը, ինչպիսին է իդեալականը, այլ նրա մասին է, թե ինչպես է այն աշխատում (գործում):

Պետություն-շուկա հարաբերությունները քննարկելիս հնարավոր չէ շրջանցել ինստիտուտներին վերաբերող հարցադրումները: Այլևս անվիճարկելի է այն, որ պետության և շուկայի գործունեության արդյունավետությունը, հանրային ռեսուրսների կառավարման արդյունավետությունը կախված է ինստիուտների կայացվածությունից և հանրային կյանքում դրանց մասնակցության աստիճանից[4]:

Այո, ներկայումս այլևս կասկածի տակ չի դրվում ինստիտուտների կարևորության հարցը, ավելին, կա արդեն ձևավորված տեսակետ ինչու ոչ բոլոր երկրներն են փորձում լավ ինստիտուտներ ստեղծել: Բանն այն է, որ իշխող քաղաքական գործիչներին ու էլիտաներին ձեռնտու է ոչ թե այն քաղաքականությունը, որն աճ է ապահովում, օգուտ է բերում, այլ այն քաղաքականությունը, որը թույլ է տալիս նրանց մնալ և պահպանել իշխանությունը: Այդ նպատակների իրականացումը միշտ չէ, որ համատեղվում են:

Ժամանակակից տնտեսությունում պետության և շուկայի արդյունավետ համագործակցումը պայմանավորված է լինելու նաև նրանով, թե ինչքանով են ինստիտուտները ընդունակ պայմաններ ստեղծել և ապահովել գոյություն ունեցող համակարգի արդյունավետ գործարկումը: Ստեղծված իրավիճակում այսօր Հայաստանի համար խիստ կարևոր է փոքր, բաց, բայց արդյունավետ պետություն ունենալու տեսլականը: Սրա ընկալումը և ընդունումը պահանջում է նախ և առաջ պետական ինստիտուտների համակարգային փոփոխություն, ազատ շուկայական տնտեսության պահանջների կատարում, նոր որակի փոխհարաբերությունների հաստատում՝ պետություն-քաղաքացի, պետություն-շուկա հարաբերություններում:

Վերը շարադրվածի տրամաբանությունից ելնելով հեղինակն անդրադարձել է նաև տնտեսական անվտանգությանը (ՏԱ), որպես ազգային անվտանգության

[4] Норт Д., Институты, институциональные изменения и функционирование экономики, Пер. с англ. А.Н. Нестеренко; предисл. и науч. ред. Б.З. Мильнера. - М.: Фонд экономической книги «Начала», 1997. стр. 5-12; 17-27. Аджемоглу Д., Робинсон Д., Почему одни страны богатые а другие бедные, Москва: Издательство АСТ, 2016, стр.99-135.

կարևորագույն բաղադրիչներից մեկի, հաշվի առնելով այն, որ զարգացման արդի փուլում գլոբալացման և տնտեսական ինտեգրման գործընթացը յուրաքանչյուր երկրի առջև ոչ միայն նոր հեռանկարներ և հնարավորություններ է բացում, այլև՝ կարող է նոր վտանգների (ռիսկերի) և ճգնաժամերի պատճառ դառնալ: Կատարվել է ՏԱ վտանգների գնահատում Հարավկովկասյան տարածաշրջանի երկրների ընդգրկումով, որն իրականացվել է նաև մեկ այլ մեթոդի կիրառմամբ, որը հնարավորություն է ընձեռում մատրիցի միջոցով բացահայտել ՏԱ սպառնալիքները և առաջնահերթ լուծում պահանջող խնդիրները:

Կարևորելով տնտեսական անվտանգության և ընդհանրապես անվտանգության խնդիրը, հեղինակի կողմից սոցիոլոգիական հարցում է կատարվել, որի նպատակն է եղել Հայաստանի և Արցախի հանրապետությունների քաղաքացիների արժեքային համակարգի ու դրա բաղկացուցիչների առաջնայնությունների, այդ արժեքային համակարգի հիերարխիկ կառուցվածքի, ինչպես նաև՝ հարևան երկրների հետ հարաբերությունների ձևավորման մասին պատկերացումների հստակեցումը: Հարցման արդյունքում արդարությունը, ազատությունը և համերաշխությունը կարևորվել են որպես առաջնային արժեքներ: Սրան ավելացնելով նաև հարևանների հետ բարի-դրացիական հարաբերությունների կողմնակիցների հանգամանքը, կարող ենք պնդել, որ այս հանգամանքը չի կարող անտեսվել երկրի անվտանգության գաղափարախոսությունը մշակելիս:

Ատենախոսության երկրորդ՝ **«Շուկայի կայացման և հանրային ռեսուրսների (ընդերքի և ջրային) կառավարման առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում»** գլխում ներկայացվել է Հայասատանի Հանրապետության ժամանակակից տնտեսության ընդհանրական մակրոնկարագիրը, անցումային շրջանի միտումներն՝ առաջարկ-պահանջարկի ձևավորման, դրա կառավարման օրինաչափությունների ուսումնասիրման միջոցով: Ուսումնասիրվել են հանրային ռեսուրսների, մասնավորապես հանքարդյունաբերության և ջրային ռեսուրսների կառավարման հիմնախնդիրներն ու օգտագործման վիճակը:

Տնտեսության պետական կարգավորման, ըստ էության, նոր համակարգի մշակումը պահանջում է տնտեսության արդի վիճակի ուրույն հետազոտում: **Պլանի ինստիտուտը** ներկայումս փոխարինվել է **շուկայի ինստիտուտով**, որը գործում է այլ սահմանափակող և խթանող կարգավորիչների շնորհիվ: Այդ նպատակով տնտեսագիտության զինանոցից պետք է գտնվեին մակրոտնտեսական վերլուծության այնպիսի մեթոդներ ու եղանակներ, որոնք կիրառելի էին շուկայական տնտեսության պայմաններում: Այդ խնդիրը լուծելու համար վերլուծվել են ամբողջական պահանջարկի և ամբողջական առաջարկի վրա տնտեսական գործոնների ազդցությունը, կառուցվել է ամբողջական պահանջարկի և ամբողջական առաջարկի դինամիկ մոդել՝ տնտեսության առկա վիճակը բնութագրելու համար, ուսումնասիրվել են ամբողջական պահանջարկի և ամբողջական առաջարկի դինամիկ մոդելում դիտվող տեղաշարժերը՝ տնտեսության զարգացման ռազմավարությունը կանխորոշելու նպատակով:

Կատարված վերլուծությունները կարևոր են ՀՀ հանրային ռեսուրսների կառավարման բարելավման տեսանկյունից: Դա թույլ կտա ուրվագծելու մակրոտնտեսական իրավիճակի բարելավման էությունը և ուղղությունները, որոնք կնպաստեն ՀՀ տնտեսության պետական կարգավորման համակարգի մշակմանը և տնտեսական տարածքի վրա դրա ազդեցության ուսումնասիրմանը:

Ուսումնասիրությունը մեկ անգամ ևս հաստատել է այն տեսակետը, որ իրականում անհնար է պետական կարգավորման կառուցակարգերը տարանջատել, պնդելով, որ ահա այս խումբ միջոցները կիրառելով՝ կվերականգնվի AD և AS կորերի նորմալ տեսքը, իսկ մեկ այլ խումբ միջոցների գործադրումը կբարելավվի դրանց դինամիկան: Այդպիսով, ուրեմն, մակրոտնտեսական իրավիճակի բարելավումը պետք է ներառի պետական կարգավորման միջոցների և կառուցակարգերի ընդհանուր, համալիր՝ ուղղված վերոհիշյալ երկու խնդիրների համլուծմանը: Այս առումով հետաքրքիր է 2000-2019թթ. առաջարկի և պահանջարկի խնդիրներին անդրադարձը (տե՛ս գծապատկեր): ՀՆԱ-ի և սպառողական գների ինդեքսների համադրումը՝ համապատասխան տարիների կտրվածքով, մեկ անգամ ևս հաստատում է, որ նշված տարիներին շատ տնտեսական կամ տնտեսագիտական օրինաչափություններ ՀՀ-ի համար պարզապես չեն գործել, որը պայմանավորված է եղել տարիներ շարունակ երկրում իրականացվող տնտեսական քաղաքականության անարդյունավետությամբ, դրամա-վարկային և հարկային քաղաքականությունների չհամաձայնեցված, ոչ փոխկապակցված քայլերով:



Գծապատկեր. ՀՀ ամբողջական պահանջարկի և առաջարկի շարժը 2000-2019թթ.[5]

Անդրադառնալով հանքարդյունաբերության կառավարման տնտեսա-բնապահպանական հիմնախնդիրներին հեղինակը պարզաբանում է, որ ուսումնասիրությունը վերաբերում է ոչ թե ընդերքին ընդհանրապես, այլ միայն հանքարդյունաբերությանը, իսկ ավելի կոնկրետ՝ մետաղական

[5] Կազմվել է հեղինակի կողմից՝ ՀՀ ՎԿ 01.03.2020թ.-ի դրությամբ հրապարակած ժամանակագրական շարքերի՝ https://www.armstat.am/am/?nid=12&id=01001, տվյալների հիման վրա:

հանքարդյունաբերությանը: Դա պայմանավորված է, նախ հանքարդյունաբերության ազդեցության չափերով, նշանակությամբ: Երկրորդ, ելնելով այն սահմանափակումներից, որ կան աշխատանքի ծավալների առումով, հեղինակը գերադասել է կենտրոնանալ մեր երկրի ընդերքի՝ որպես հանրային ռեսուրսի, երկու կարևորագույն բաղադրիչին՝ հանքարդյունաբերությանը և ջրային ռեսուրսներին:

Հայաստանի Հանրապետությունը՝ չունենալով հանքարդյունաբերության զարգացման երկարաժամկետ ռազմավարություն, առաջնորդվելով բացառապես միջնաժամկետ ծրագրերով, այսօր լրջագույն խնդիրների առջև է կանգնել՝ ահռելի չափերի հասնող պոչամբարներ՝ հանրապետության միայն 21 պոչամբարներում ավելի քան 1 մլրդ տոննա արդյունաբերական թափոն է կուտակվել[6], անվերահսկելի բնապահպանական խնդիրներ, հանքերի կամ պոչամբարների փլուզում կամ դրա պոտենցիալ վտանգ:

ՀՀ հանքարդյունաբերության ոլորտը ազգային տնտեսության մեջ ունի առանցքային մասնաբաժին: Հայաստանից արտահանվող նյութերի առնվազն կեսը բաժին է ընկնում հանքային խտանյութերին և մետաղներին, համաձայն հանքարդյունաբերության և մետաղների միջազգային խորհուրդի կողմից հրապարակվող Հանքարդյունաբերության Ներդրման Ինդեքսի՝ ՀՆԻ, Հայաստանն աշխարհի 183 երկրների ցանկում զբաղեցնում է 14-րդ տեղը, ընդ որում 2018թ. մետաղական հանքարդյունաբերության արտադրության արժեքը կազմել է ՀՆԱ-ի 7.03%-ը, իսկ ռենտան՝ 4.60%[7]: Ներկայումս փաստացի արտահանման կառուցվածքում մետաղների և խտանյութի տեսակարար կշիռը ավելի քան 45 տոկոս է, գյուղատնտեսական արտադրանքի, խմիչքի և ծխախոտի բաժինը՝ 20 տոկոս է, ոսկե իրերինը՝ 10 տոկոս:

Բոլոր դեպքերում, հատկապես բնապահպանական խնդիրներով հանդերձ, հանքարդյունաբերությունը Հայաստանի տնտեսության համար էական ազդեցություն և նշանակություն ունեցող տնտեսական միավոր է, որը ներկայացված է ստորև բերված աղյուսակի միջոցով (տե՛ս աղյուսակը):

2019 թ. հանքարդյունաբերության ընդհանուր արտադրանքը կազմել է 300 մլրդ 745 մլն դրամ՝ ընթացիկ գներով, մետաղականինը՝ 287 մլրդ 273 մլն դրամ: Աշխատանքի արտադրողականությունը նույն ժամանակաշրջանում հավասար է եղել՝ հանքարդյունաբերությունում 35 մլն 130 հազ. դրամ, մետաղականում 39 մլն 477 հազ. դրամ, իսկ ամբողջ արդյունաբերությունում՝ ընդամենը 21 մլն 698 հազար[8], այն

[6] Հայաստանի պոչամբարները. վտանգները երկրի և բնակչի համար, ampop.am, 11 փետրվար 2019թ., https://ampop.am/tailing-risks-in-armenia/

[7] Role of Mining In National Economies, Mining Contribution Index 2018 4th Edition, London, 2018, p.2, www.icmm.com

[8] ՀՀ ՎԿ, Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության հնգանիշ դասակարգման 2019 թվականի հունվար – դեկտեմբերին, https://www.armstat.am/file/article/5nish_12_2019-.pdf

դեպքում, երբ ՀՀ տնտեսության մեջ աշխատանքի արտադրողականությունը 2019թ. կազմել է 7 մլն 222 հազ. դրամ[9]:

Աղյուսակ

Մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների կողմից պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված հարկերը և վճարները 2016-2017թթ.[10]

	2016		2017	
	մլն.դրամ	%	մլն.դրամ	%
Պետական բյուջեի եկամուտները	1,171,107	100	1,237,781	100
Մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների կողմից հաշվարկված հարկային վճարումներ	51,100	4.36	87,048	7.1
Ռոյալթի	23,571	2.01	37,575	3.04
ԱԱՀ	9,030	0.77	16,995	1.37
Եկամտային հարկ	11,824	1.01	14,363	1.16
Շահութահարկ	4,224	0.36	11,811	0.95
Տույժեր	362	0.03	1,310	0.11
Տուգանքներ	509	0.04	1,045	0.08
Բնապահպանական վճարներ (հարկեր)	71	0.01	794	0.06
Հանքարդյունաբերության թույլտվության պետական տուրք	-	0.00	240	0.02
Ակցիզային հարկ	117	0.00	65	0.01
ԵԱՏՄ երկրներից ներմուծված ապրանքների համար գանձված բնապահպանական վճարներ (հարկեր)՝ ըստ ներկայացված ներմուծման հարկային հայտարարագրերի	3	0.00	5	0.00
ԵԱՏՄ անդամ չհամարվող երկրներից ներմուծված ապրանքների համար գանձված բնապահպանական վճարներ (հարկեր)՝ ըստ ներկայացված մաքսային հայտարարագրերի	10	0.00	15	0.00
Մաքսատուրք և մաքսավճարներ	1,083	0.09	2,036	0.16
Այլ	298	0.03	794	0.06

Աղբյուրը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ

Աշխարհի գրեթե բոլոր երկրներում խիստ կարևորվում են ջրային ռեսուրսների օգտագործման հիմնահարցերը, ուստի պետությունների մեծ մասն ունի այդ ռեսուրսների օգտագործման ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ ռազմավարություններ: Հայաստանի Հանրապետությունը՝ ըստ ներկայումս ընդունված ջրային ռեսուրսների ճգնաժամերի ուժգնության դասակարգման, ներառված է ջրային ռեսուրսների ճգնաժամի բարձր մակարդակ ունեցող երկրների խմբում, ինչը պարտադրում է և՛ այսօր, և՛ առաջիկայում ավելի մեծ ուշադրություն դարձնել

[9] ՀՀ ՎԿ. 2019թ.-ի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) եռամսյակային և տարեկան նախնական տվյալները, https://www.armstat.am/file/doc/99517723.pdf

[10] Հայաստանի Հանրապետության արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) զեկույց, 2016-2017թթ. հրապարակվել է 2018թ. դեկտեմբերին, էջ 35, https://eiti.org/document/20162017-armenia-eiti-report

հանրապետության ջրային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման ուղիների բացահայտմանը:

Հայաստանի ջրային ռեսուրսները ձևավորվում են հիմնականում նրա տարածքում տեղացող մթնոլորտային տեղումների և Արաքս ու Ախուրյան սահմանային գետերի ջրհոսքերի հաշվին: Թեև հետազոտողների մեծ մասը ջրային ռեսուրսների գոյացան աղբյուրների վերաբերյալ միասնական կարծիք ունի, սակայն այդ ռեսուրսների ծավալների գնահատման ժամանակ ներկայացվում են շատ տարբեր մեծություններ: Նույնիսկ այնպիսի ցուցանիշի վերաբերյալ, ինչպիսին մակերևութային ջրհոսքի միջին բազմամյա մեծությունն է, որը համեմատաբար կայուն է (որոշվում է 75–80 տարվա միջինացված տվյալների հիման վրա), եզրահանգումները շատ տարբեր են: Էական տարբերություններ կան նաև ստորգետնյա ջրերի բնութագրերի ցուցանիշների միջև, մասնավորապես, դրանց օգտագործման (կամ, ինչպես նախկինում էր ընդունված ասել, «շահագործման») պաշարների ծավալների առումով: Այսպես, ջրային պաշարները (մակերեսային և ստորերկրյա) գնահատվում են՝ սկսած 11,7 կմ^3-ի սահմաններից մինչև 9,0կմ^3 և նույնիսկ 7[11]: ՀՀ-ում 2011-2018 թվականների համար ուսումնասիրված քաղցրահամ ջրերի ջրառի և ջրօգտագործման տվյալներից (ըստ տնտեսական գործունեության տեսակների դասակարգման) հետևում է, որ 2018թ.-ին 2011թ.-ի համեմատ ջրառն ավելացել է 11.3%-ով (2011թ.-ի 2438.3 մլն խոր. մետրից 2018թ.-ին հասնելով 2714.4-ի): Իսկ ուսումնասիրվող ժամանակահատվածում ջրառի ամենամեծ ծավալը գրանցվել է 2015թ.-ին՝ 3271.7 մլն խոր. մետր: Ջրօգտագործման ցուցանիշների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2018թ.-ին 2011թ.-ի համեմատ ջրօգտագործումն ավելացել է 10.8%-ով (2011թ.-ի 1738.1 մլն խոր. մետրից 2018թ.-ին հասնելով 1926.5 մլն խոր. մետրի), իսկ ջրօգտագործան ամենաբարձր ցուցանիշը նույնպես եղել է 2015թ.-ին՝ 2533.1 մլն խոր. մետր: Ջրօգտագործման ցուցանիշով առաջին տեղը զբաղեցնում է ոռոգումը, որի բաժինը ընդամենը ջրօգտագործման ցուցանիշի մեջ 2011թ.-ի 49.9%-ից 2018թ.-ին հասել է 55.3%-ի:

Ջրօգտագործման ցուցանիշի մեծությունը կախված է տնտեսական գործունեության առանձին տեսակների տեխնոլոգիական, ինչպես նաև մարդածին (անտրոպոգեն) և այլ գործոններից: Ուսումնասիրության արդյունքները փաստում են, որ 2015-2018թթ.-ին ՀՀ ՀՆԱ-ի 1000 դրամի հաշվով ջրօգտագործման ցուցանիշները միմյանցից զգալիորեն տարբերվում են: Այսպես, եթե նշված ցուցանիշը 2018թ.-ին ամենաբարձրն է եղել ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում ոլորտում՝ կազմելով 8.10 խոր. մետր, ապա գործունեության առանձին տեսակների համար այդ ցուցանիշը կազմել է 0-ին մոտ թիվ՝ շինարարությունում՝ 0.0, իսկ մշակող արդյունաբերությունում՝ 0.03: Ընդհանուր առմամբ, 2018թ.-ին ՀՀ-ում արտադրված ՀՆԱ-ի 1000 դրամի հաշվով ջրօգտագործումը կազմել է 0.32 խոր. մետր

[11] Մովսիսյան Վ. «Հայաստանի Հանրապետության ջրային պաշարների կանխատեսումը, գնահատումը և համալիր կառավարումը», Եր., «Գիտություն» հրատարակչություն, 2003, էջ 59:

և այն 2015թ.-ի ցուցանիշի համեմատ (0.50) նվազել է, իսկ ուսումնասիրված տարիների (2015-2018թթ.) համար միջին ցուցանիշը կազմել է 0.42 խոր. մետր:

Վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետությունում դեռևս զգալի են ջրային ռեսուրսների կորուստները: Նկատենք, որ 2011-2018թթ.-ին ջրային ռեսուրսների կորուստները ոչ թե նվազել, այլ ավելացել են՝ 2011թ.-ի 700.1 մլն խոր. մետրից 2018թ.-ին հասնելով 787.9 մլն խոր. մետրի, իսկ նշված ժամանակահատվածում կորուստների ամենաբարձր ցուցանիշը եղել է 2013թ.-ին (866.0 մլն. խոր. մետր): Այլ կերպ ասած, եթե 2011թ.-ին ջրային ռեսուրսների կորուստը ընդամենը ջրառի (2438.3 մլն խոր. մետր) նկատմամբ կազմել է 28.7%-ը, ապա 2018թ.-ին՝ 29.0%: Այսինքն, յուրաքանչյուր 4.8 տարվա (38.21 կմ խոր. / 7.96 կմ խոր.) ընթացքում Հայաստանի Հանրապետությունը «կորցնում է» մեկ Սևանա լիճ:

Ուսումնասիրության արդյունքները փաստում են, որ անկախությունից ի վեր ՀՀ-ում այդպես էլ չձևավորվեց գիտականորեն հիմնավորված ու հետևողականորեն կենսագործվող բնական (ներառյալ՝ ջրային) ռեսուրսների կառավարման ամբողջական տեսլականը՝ երկրի տնտեսության երկարաժամկետ զարգացման կտրվածքով, որով կսահմանվեր ոլորտի զարգացմանն ուղղված համակարգված գործողությունների փաթեթը: Նկատի ունենալով ջրային ռեսուրսների բացառիկ նշանակությունը հեղինակը կարևորում է ՀՀ ջրային ռեսուրսների օգտագործման համալիր զարգացման ծրագրերի՝ առնվազն 15-20 տարիների համար՝ հնգամյա, եռամյա և տարեկան կտրվածքներով, մշակումը և օրենքների տեսքով հաստատելը:

Ատենախոսության երրորդ՝ **«Հանրային ռեսուրսների՝ ընդերքօգտագործման և ջրային ռեսուրսների կառավարման կատարելագործման ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում»** գլխում ներկայացվել են տնտեսության կառուցվածքային տեղաշարժերը, գնահատական է տրվել զարգացման միտումներին, ինչպես նաև տրվել են հանքարդյունաբերության արդյունավետության բարձրացման և ջրային ռեսուրսների ու համակարգերի կառավարման կատարելագործման հիմնական ուղիները:

ՀՀ տնտեսությունում նախկինում գործող համակարգն ամբողջովին սպառելով իրեն, որպես ժառանգություն թողել է ոչ մրցունակ տնտեսություն իր ինստիտուտներով, կառուցվածքով, մարդկային և կառավարման ռեսուրսներով: Նոր իշխանության հաջողությունը պայմանավորված է լինելու այն հանգամանքով, թե ինչ արդյունավետությամբ է նա կարողանալու իրականություն դարձնել իր կողմից հրապարակված և բարձրաձայնված գաղափարները՝ կառավարման նոր ինստիտուտներ, ներառական, արդյունավետ և մրցունակ տնտեսություն՝ խաղի սկզբունքորեն նոր կանոններով, կառուցվածքով, հասարակական նոր համաձայնագրով, իրենց բովանդակությամբ և էությամբ նոր մասնակիցներով, պետություն-շուկա-մասնավոր ձեռնարկատիրության նոր հարաբերություններով՝ ըստ էության հանրային նոր ռեսուրսներով: Իշխանությունը, որպեսզի հնարավորություն

ունենա իրականություն դարձնել իր մոտեցումները պետք է անցնի պարզ, սակայն միևնույն ժամանակ բարդ, ցավոտ միջոցառումների: Այդ միջոցառումներից մեկն էլ ուղղված պետք է լինի տնտեսության կառուցվածքի փոփոխությանը: Այս հանգամանքը հաշվի առնելով, հեղինակը տնտեսության համախառն ներքին արդյունքի փոփոխությունների վերլուծության միջոցով փորձ է արել ներկայացնել տնտեսության ընդհանուր վիճակը մի կողմից, իսկ մյուս կողմից վեր հանել այն հիմնախնդիրները, որ տարիների ընթացքում լուծում չստանալով այսօր խոչընդոտում են կամ չեն նպաստում տնտեսության, երկրի առաջընթացին: Միաժամանակ տրվել են նաև գնահատականներ տարբեր ժամանակահատվածներում ՀՆԱ-ի վրա առանձին գործոնների ազդեցության վերաբերյալ:

Անդրադառնալով ՀՆԱ-ի բովանդակությանը, նպատակ է դրվել պարզել և գնահատել Հայաստանի Հանրապետության տնտեսության կառուցվածքային փոփոխությունների կարևորությունը, որի մասին մանրամասն և շատ անգամ ներկայացրել են ՀՀ իշխանության ներկայացուցիչները[12]: Նպատակն իրավիճակի ամբողջական պատկերը ստանալն է, առավելությունների կամ թերությունների հայտնաբերումը, ըստ դրանց էլ փորձ է արվել ներկայացնել առաջարկություններ վիճակը բարելավելու ուղղությամբ[13]:

Տնտեսության արդյունավետ կառուցվածքի ձևավորման համար էական նշանակություն ունի համապատասխան պետական քաղաքականության մշակումը և իրականացումը, որի առանցքում պետք է լինի տնտեսության կառուցվածքային գերակայությունների հստակեցումը, դրանց նպատակաուղղված կերպով կենսագործումը, տնտեսության մրցունակության բարձրացումը: Այս համատեքստում առավել ուշադրության են արժանի տնտեսության այն ոլորտները որտեղ դեռևս զգալի է պետական մասնակցությունը: Խոսքը վերաբերում է կրթությանը և առողջապահությանը: Դեռևս պետությունը չի ամբողջացրել այս երկու հատվածների առնչությամբ իր սկզբունքները, մոտեցումները: Հանրային ռեսուրսների կառավարման բարելավման առումով խնդիրն էլ ավելի է կարևորվում՝ ի նկատի ունենք ժամանակակից պայմաններում մարդկային կապիտալի առանձնահատուկ դերն ու նշանակությունը:

Այն, որ հանքաարդյունաբերությունը տարիների ընթացքում բազմաթիվ հիմնախնդիրներ է ստեղծել և շարունակում է նորերը առաջացնել՝ նույնպես անվիճելի է: Հանքարդյունաբերության ոլորտում գործունեությունը զուգորդված է եղել ռիսկերով և խոչընդոտներով, շատ հաճախ երկրաբանական հետախուզությունն արդյունավետ չի եղել, հետագայում էլ ընդերքի շահագործման ժամանակ խախտվել են գործող

[12] «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի N 65-Ա որոշումը, ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2019թ.-ի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ, «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» ՀՀ կառավարության 2018թ.-ի հունիսի 1-ի N 581-Ա որոշում, http://www.gov.am/files/docs/2782.pdf:

[13] Խաչատուրյան Վ., ՀՀ տնտեսության կառուցվածքային փոփոխությունները և դրանց գնահատումը, Բանբեր Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարանի, 2019[3], էջ 58-71:

բնապահպանական, սոցիալական պահանջները: Արդյունքում այսօր էլ առկա են սոցիալական, բնապահպանական խնդիրներ, որոնք տարիներ շարունակ անուշադրության են մատնվել և այսօր հրատապ լուծումներ են պահանջում: Նման ռիսկերի նվազեցման գործիքները պետք է ներառեն բնական հանածոների արդյունահանումը սահմանափակող կանոնների խստացումը, արդյունահանող ընկերությունների կողմից բնությանը հասցված վնասի մեղմման և դրանց վերացման ֆինանսական երաշխիքների տրամադրումը, ժամանակակից տեխնոլոգիաների և մոնիտորինգի ու գնահատման համակարգերի կիրառումը: Դրանք իրականություն դարձնելու համար հեղինակի կարծիքով անհրաժեշտ է.

1) մշակել հանքարդյունաբերության ոլորտի ռազմավարություն՝ ներգրավելով բոլոր շահագրգիռ կողմերին - կառավարություն, ոլորտի հետ առնչվող նախարարություններ, քաղաքացիական հասարակություն, հանքարդյունաբերող կազմակերպություններ, պոտենցիալ ներդրողներ, ազդակիր համայնքներ, միջազգային դոնոր կազմակերպություններ,

2) իրականացնել ոլորտի բնապահպանական և սոցիալական հիմնական հարցերի գնահատում և ներկայացնել գործնական առաջարկներ, ուղղված բացահայտված բացասական իրողությունները չեզոքացմանը և դրական հնարավորությունների ընլայնմանը,

3) իրականացնել տեխնոլոգիաների գնահատում՝ Հայաստանում տարբեր հանքարդյունաբերական ծրագրերում կիրառվող տեխնոլոգիաների գնահատում և այն աշխատանքների բացահայտում, որոնք պահանջում են մեքենայացման ավելի բարձր մակարդակ և բարելավված կառավարում,

4) ուսումնասիրել ընդերքօգտագործման իրավունքը դադարեցված, լքված, ապօրինի և այլևս արդյունահանման համար չօգտագործվող հանքավայրերն ու տեղամասերը, գնահատել չօգտագործվող հանքավայրերի կամ նրա տեղամասերի հետագա օգտագործման հնարավորությունները, ինչպես նաև բնապահպանական ռիսկերը:

Ընդերքի օգտագործման, հատկապես բնապահպանական խնդիրների լուծման համար հեղինակն առաջարկում է կիրառել արդեն տարածված և արդյունավետ աշխատող տնտեսական լծակներ: Այդ ենթատեքստում աշխատանքում ներկայացված է մի ընդհանուր դիտարկում - ունիվերսալ մոդելի տեսքով, որը կիրառելի կլինի նաև Հայաստանի համար: Այն ձևակերպվել է այսպես՝ «պետք է վճարի նա, ով աղտոտում է շրջակա միջավայրը»:

Ջրային ռեսուրսները պետության սեփականություն հանդիսացող կարևորագույն ռեսուրսներն են, որոնց տնօրինման, տիրապետման և օգտագործման իրավունքները սահմանված են ՀՀ ջրային օրենսգրքով: Սակայն, ինչպես ցույց է տալիս աշխատանքում կատարված ուսումնասիրությունը, ջրային օրենսգրքի ընդունումից հետո, որքան էլ պարադոքսալ թվա, համակարգի գործունեությունը ամենևին էլ չի բարելավվել, այլ ճիշտ հակառակը՝ ավելացել են համակարգում կատարվող ծախսերը,

պարտքերը, միաժամանակ նվազել է կառավարման արդյունավետությունը: Նման իրավիճակի հիմնական պատճառներից մեկն այն է, որ ջրային համակարգերի օգտագործման՝ ՀՀ ջրային օրենսգրքով սահմանված, հինգ ձևերից մինչ օրս կիրառվել է միայն ջրային համակարգերի անհատույց օգտագործման իրավունքը, իսկ մնացած չորսը, որոնք պետք է ներդրումներ և կառավարման նոր որակ մտցնեին ջրային համակարգերում և ջուր սպառողներ, ընկերություններ ու պետություն հարաբերություններում, այդպես էլ չեն կիրառվել:

Ջրային համակարգերի օգտագործման և կառավարման ոլորտում ձևավորվել է բացարձակ պետական մենաշնորհ, ինչն էլ հանգեցրել է այդ համակարգերի անարդյունավետ օգտագործման և կառավարման՝ բացառելով տնտեսավարման առաջադիմական ձևերի կիրառումը: Քանի որ ջրային ռեսուրսները համարվում են պետության սեփականություն, ապա հեղինակի կարծիքով ջրային համակարգերի օգտագործման և կառավարման բազմազանությունն այն գործիքն է, որը կարող է էականորեն բարելավել ջրային ռեսուրսների օգտագործման և կառավարման արդյունավետությունը: Ուստի, պահպանելով պետական սեփականություն հանդիսացող ջրային համակարգերի օգտագործման և կառավարման ՀՀ ջրային օրենսգրքով սահմանված բազմազանությունը, պետք է շարունակել դրանց գործնական կիրառումը՝ ուղղելով կառավարության կողմից այդ ոլորտում թույլ տրված սխալները, ինչպես նաև թույլ տալով այդ համակարգերի կառավարման ոլորտում մասնավոր կապիտալի ներգրավումն ու կառավարման նոր ձևերի կիրառումը: Այդ նպատակով հեղինակը առաջարկում է ՀՀ ջրային օրենսգրքում ավելացնել ջրային համակարգերի օգտագործման իրավունքի փոխանցման նոր ձևեր՝ կառուցում – տիրապետում – կառավարում – փոխանցում ծրագրերի իրականացման նպատակով, և կառուցում – կառավարում – տիրապետում կամ կառուցում – վարձակալում – տիրապետում ծրագրերի իրականացման նպատակով, որոնք կապահովեն կառավարման բարելավում, մասնավոր սեփականության մուտք տվյալ համակարգեր, դրանով իսկ ապահովելով մրցակցություն, ինչը կարող է էականորեն նպաստել իրավիճակի բարելավմանը:

Ատենախոսությունում իրականացված վերլուծությունների և ստացված գիտական արդյունքների ամփոփման արդյունքում կատարվել են **եզրակացություններ**, որոնց բովանդակությունը հիմնականում կայանում է հետևյալում՝

1. XX դարի սկզբին ենթադրվում էր, որ տնտեսական աճը պետք է ապահովի պետությունը, մինչդեռ կուտակված առաջավոր փորձը այլ բան է վկայում՝ պետությունը կարևոր դեր է խաղում տնտեսական և սոցիալական աճը ապահովելու գործում, սակայն տնտեսական աճի անմիջական աղբյուրը չէ: Պետությունն ուղղակի հնարավորություններ ու պայմաններ է ստեղծում, հսկողություն իրականացնում: Պետությունը նաև կարգավորում է նորանոր բարդ ու հասարակության անդամների միջև փոխկապակցված տնտեսական գործունեության բնագավառները և նպաստում իր քաղաքացիների բարեկեցության և կենսամակարդակի աճին:

Ներկայումս բազմաթիվ երկրներ սկսել են մրցակցել պետական կառավարման մոդելներով, այլ ոչ թե տնտեսական քաղաքականության առանձին հատվածների կարգավորումներով: Կառավարման մոդելի ընտրությամբ է պայմանավորված լինելու հանրային ռեսուրսների կառավարման արդյունավետությունը, որն էլ իր հերթին կկանխորոշի տվյալ երկրի, հասարակության, ավելի մեծ մասշտաբով՝ մարդկության զարգացման հաջողություններն ինչպես տվյալ ժամանակաշրջանում, այնպես էլ ապագայում:

2. Պետության կամ շուկայի կարգավորումների ամենամեծ վտանգն այն իրավիճակն է, երբ կա մեծ կենտրոնացում պետության ձեռքում կամ էլ հակառակը, երբ շուկայի կարգավորման կառուցակարգերը անվերահսկելի են դառնում հասարակության կողմից:

Ընդունելով Ադամ Սմիթի «անտեսանելի ձեռքի» գոյության փաստը, շատ հաճախ մոռացության է մատնվում հենց այդ «անտեսանելի ձեռքի» պաշտպանության խնդիրը, պայմանավորված պետության կաղմից շուկային միջամտության ցանկությամբ: Ներկայումս հենց շուկան պաշտպանության կարիք ունի, նոր տեխնոլոգիաների դարաշրջանն անսահման հնարավորություններ տալով տեղեկություններ տիրապետելու, օգտագործելու, կառավարելու ոլորտում, միաժամանակ չի վերահսկում հասարակության համար վտանգավոր նպատակներով օգտագործելու հնարավորությունները: Եվ այստեղ է, որ պետությունը ստանձնում է այդ բնագավառը կարգավորելու պարտականությունը, որն առանձին երկրներում, կապված իշխող քաղաքական ուժի մտադրություններից կամ գաղափարախոսությունից, կարող է սահմանափակել մարդկանց ազատությունները: Սա նոր ժամանակների մարտահրավերներից է, որը պահանջում է պետական միջամտության սկզբունքորեն այլ, նորովի մոտեցումներ:

3. ՀՀ-ում իրականցվող տնտեսական հեղափոխության հաջողությունը մեծապես կախված է լինելու նաև այն հանգամանքից, թե հեղափոխության արդյունքում ինչպիսի վերաբերմունք է ձևավորվելու պետության նկատմամբ, ինչպիսին են լինելու պետություն – շուկա հարաբերությունները: Դրանով է պայմանավորված լինելու պետական գործառույթների ծավալն ու բովանդակությունը: Նախկին համակարգի ամենալուրջ և ճակատագրական սխալն այն էր, որ ժամանակի ընթացքում խախտվեց շուկայական տնտեսության ամենակարևոր կանխադրույթը՝ բիզնեսի և իշխանության տարանջատման անհրաժեշտությունը, որն էլ հանգեցրեց օլիգարխիկ-կլանային տնտեսության ձևավորմանը:

4. Պետության և շուկայի ժամանակակից տնտեսության վերաբերյալ հիմնական վեճը նրա մասին չէ թե ինչպիսին է նրա կառուցվածքը, ինչպիսին է իդեալականը, այլ այն մասին է, թե ինչպես է աշխատում: Վերջինս հիմնականում պայմանավորված է այն ինստիտուտներով, որոնք կոչված են պայմաններ ստեղծել և ապահովել գոյություն ունեցող համակարգի արդյունավետ աշխատանքը: Դա էլ նշանակում է ունենալ այնպիսի հասարակարգ, որտեղ առաջնային պետք է լինի համընդհանուր

բարեկեցության ապահովումը, որը նախատեսում է հանրային ռեսուրսների արդյունավետ կառավարում և օգտագործում, երկրի և քաղաքացիների անվտանգություն: Բազմաթիվ երկրների փորձը ցույց է տալիս, որ այս սկզբունքներից հրաժարվելը ի վերջո անհաջողությանների է հասցնում: Եթե որոշակի ժանակաշրջանում երկրում ստեղծված հանրային բարիքներից օգտվողների թիվը աճելու փոխարեն պակասում է, հանրային ռեսուսների օգտագործումը չի բերում ընդհանուր բարեկեցության բարձացման, տվյալը երկիրը կորցնում է ընդհանրապես զարգանալու և' հնարավորությունը, և' ներուժը[14]:

5. Յուրաքանչյուր երկրի առջև գլոբալացման և տնտեսական ինտեգրման գործընթացը ոչ միայն նոր հեռանկարներ և հնարավորություններ է բացում, այլև կարող է նոր վտանգների (ռիսկերի) և ճգնաժամերի պատճառ դառնալ: ՀՀ-ի համար, որը օբյեկտիվ պատճառներով՝ տնտեսության փոքրություն, տարածաշրջանային կոնֆլիկտներ, բնական և մարդկային ռեսուրսների սահմանափակություն ունի և ստիպված է վարել բաց դռների տնտեսական քաղաքականություն, առավել քան կարևորվում է երկրի և, մասնավորապես, տնտեսական անվտանգության (ՏԱ)՝ որպես ազգային անվտանգության կարևորագույն բաղադրիչներից մեկի, ապահովումը:

Անցումային տնտեսություն ունեցող երկրների ՏԱ-ն ունի որոշակի առանձնահատկություններ, որոնք դրսևորվում են հետևյալ ուղղություններով՝ սպառող և սպասարկող երկրի վերածվելու վտանգ, նորագույն տեխնոլոգիաների վրա հիմնված արտադրությունների կանխարգելում, բնակչության և, հատկապես, մասնագիտական բարձր որակավորում ունեցող անձանց արտագաղթ, բնական ռեսուրսների ոչ հաշվենկատ օգտագործում, ՀՆԱ-ի նկատմամբ արտաքին պարտքի տեսակարար կշռի մեծացում, կցորդային տնտեսական համակարգի կարգավիճակի առկայություն, գիտական և կրթական համակարգերի կազմալուծում: Նշված վտանգները՝ մասնակի դրսևորումներով, առկա են նաև Հայաստանի համար և հասկանալի է, որ վարվող քաղաքականությունն առաջին հերթին պետք է ուղված լինի այդ «ծուղակներից» խուսափելուն: ՏԱ-ն կարևոր գործոն է երկրի անկախության, ինքնիշխանության ամրապնդման, հանրային ռեսուրսների արդյունավետ կառավարման խնդիրների լուծման համար:

6. Հանքարդյունաբերության ոլորտը կարևոր ներդրում ունի Հայաստանի տնտեսության զարգացման գործում: Բացի այդ, հանքարդյունաբերության ոլորտը հանդես է գալիս որպես արտահանման եկամուտների, օտարերկրյա ուղղակի ներդրումների և քաղաքաբնակ կենտրոններից դուրս համեմատաբար բարձր վարձատրվող աշխատատեղերի ստեղծման աղբյուր: Փորձը ցույց է տալիս, որ համեմատած այլ ոլորտների հետ՝ հանքարդյունաբերությունն ապահովում է հարկային զգալի եկամուտներ: Ոլորտը աչքի է ընկնում նաև ներդրումների զգալի ծավալներով: Այսպես, համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների 1988-2018 թվականներին օտարերկրյա ներդրումների համախառն հոսքերը

[14] Khachaturyan V., Modern perceptionsof the roleof state, Bulletin of high technology, 3(10)/2019, Shushi 2019, p 60-71.

հանքարդյունաբերության և հարակից գործունեության բնագավառում կազմել են 2,004 տրլն ՀՀ դրամ, իսկ ամբողջ իրական հատվածում՝ 8,606 տրլն ՀՀ դրամ[15]:

7. ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ անցած ավելի քան երկու տասնամյակների ընթացքում ՀՀ տնտեսությունում արձանագրվել են ակտիվ կառուցվածքային փոփոխություններ: Դրանց օբյեկտիվ և տրամաբանական բնույթը դեռևս չի նշանակում, որ այդ տեղաշարժերը ցանկալի են և օպտիմալ՝ հասարակության, պետության և երկրի երկարաժամկետ նպատակների իրագործման տեսանկյունից: Պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ տնտեսության նոր կառուցվածքի ձևավորումը և գործարկումը, որպես կանոն, տեղի է ունենում ցածր տեխնոլոգիական հենքի վրա, որը բավականաչափ հեռու է զարգացած երկրներում ներկայումս առկա մակարդակից, ինչը ՀՀ տնտեսության ներկայիս մրցակցային առավելությունները դարձնում է ոչ վստահելի և ժամանակավոր:

Հանրապետության տնտեսության կառուցվածքային քաղաքականության հիմնական նպատակը պետք է հանդիսանա ներքին և համաշխարհային շուկաներում հայրենական ապրանքների և ծառայությունների մրցունակության բարձրացմանն աջակցությունը, վերամշակման բարձր աստիճանով արտադրանք թողարկող ոլորտների, ինչպես նաև ծառայությունների մասնաբաժնի ավելացման ուղղությամբ տնտեսական քաղաքականության ապահովումը:

8. Դեռևս չկա տնտեսական այն ունիվերսալ մոդելը, որը կարող է մեղմացնելով արտաքին ազդեցությունները՝ արտաքին էֆֆեկտները, ամբողջապես լուծել մարդկության առջև կանգնած հրատապ բնապահպանական հիմնախնդիրները: Բացի քաղաքական կամքից, որը պահանջվում է միջազգային կազմակերպություններից, պետություններից, միջազգային վերազգային կորպորացիաներից, դեռևս չկա նաև խնդրի տեսական լուծման վերջնական ձևակերպումը: Սակայն կան մոտեցումներ, որոնք պրակտիկայում կիրառելու դեպքում արդյունավետ միջոց կդառնան վերը նշված խնդիրների լուծման համար:

Բնապահպանական խնդիրների լուծման նպատակով կամ պետությունը պետք է ամբողջությամբ ստանձնի այդ խնդրի լուծման բեռը կամ արտաքին բացասական ազդակները ներառի արտադրական ծախսերի մեջ, այսինքն՝ դրանք դարձնի արտադրողի անուղղակի ծախսերի մաս: Վերջին տարբերակը տնտեսագիտության մեջ հայտնի է «ինտեռնալացում» անվամբ:

Անհրաժեշտ է, որպեսզի պետությունն օրենսդրորեն սահմանի տնտեսական զարգացման էկոլոգիական սահմանները: Այն հանգամանքը, որ այսօր արտաքին էֆֆեկտները չեն ընդգրկվում արտադրական ծախսերի մեջ, ցույց է տալիս այնպիսի կարևոր մակրոտնտեսական ցուցանիշների անկատարությունը, ինչպիսին են ՀՆԱ-ն, ՀԱԱ-ն: Այդ ցուցանիշներում նախատեսված չեն «կենսաբանական կապիտալի» կորուստները, չեն հաշվարկված անտրոպոգեն ազդեցությունները կրճատելու և

[15] ՀՀ ՎԿ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2019 թվականի հունվար-փետրվարին, էջ 105:

էկոլոգիական ճգնաժամերը վերացնելու համար անհրաժեշտ ծախսերը, որոնք համարվում են հասարակության բարեկեցության համընդհանուր չափորոշիչներ և, ընդհակառակը, արատահայտվում են դրանցում որպես տնտեսական աճի բաղադրիչ:

9. ՀՀ ջրային հարաբերությունների համակարգի փոփոխության և բարելավման ամուր և հուսալի տնտեսա-իրավական հիմքեր է ստեղծում Հայաստանի Հանրապետությունում ՊՄԳ հարաբերությունները կանոնակարգող օրենքը՝ («Պետություն-մասնավոր գործընկերության մասին»), որը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2019թ.-ի հունիսի 28-ին և ամբողջությամբ ուժի մեջ է մտել 2020 թվականի հունվարի 1-ից[16]: Դրա նշանակությունը հատկապես կարևոր է, որ այն կապված է ջրային համակարգերի կառավարման գործում մասնավոր կապիտալի ներհոսքի հետ: Վերը նշված օրենքի համաձայն սահմանված է ՊՄԳ պայմանագրի հասկացությունը, ըստ որի. «ՊՄԳ պայմանագիր՝ ՊՄԳ ծրագրի իրականացման նպատակով հանրային գործընկերոջ և մասնավոր գործընկերոջ միջև՝ սույն օրենքով սահմանված կարգով կնքված պայմանագիր, այդ թվում՝ կոնցեսիայի»: ՊՄԳ ծրագրերի իրականացման նկատմամբ կիրառելի ընթացակարգերն ու կանոնները սահմանվում են ՀՀ կառավարության որոշմամբ[17]:

ՊՄԳ տնտեսա-իրավական հստակ դաշտի ստեղծման կարևորությունը պահմանավորված է նրանով, որ հենց ջրային հարաբերությունների ոլորտը կարիք ունի հսկայական ներդրումների, իսկ այս հարաբերությունները, վերջին 20 տարիների ընթացքում մնալով պետական սեփականության ներքո, ունեցել են ցածր արդյունավետություն և «կլանել» հսկայական պետական ռեսուրսներ՝ չապահովելով համապատասխան (ֆինանսական և սոցիալական) փոխհատուցում:

ՀՀ ջրային օրենսգրքում անհրաժեշտ է նախատեսել ՊՄԳ վերոնշյալ ձևերի կիրառումը ջրային ենթակառուցվածքում: Առաջարկվում է հնարավորություն ընձեռնել, որպեսզի ջրային համակարգերի կառավարման և օգտագործման ոլորտում կիրառվեն ՀՀ Ազգային ժողովի կողմից 2019թ.-ի հունիսի 28-ին ընդունված «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենքի դրույթները, այդ օրենքից հետևող ընթացակարգերը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ սահմանվեն պետություն-մասնավոր գործընկերության այլ առանձնահատկություններ:

---

[16] «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենքը, ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2019թ.-ի հունիսի 28-ին (ՀՕ-113-Ն), տե՛ս Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական www.arlis.am կայքում:

[17] Նույն տեղում:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Խաչատուրյան Վ., Պետություն և շուկայի փոխառնչությունների ինստիտուցիոնալ հիմքերը, «Գիտական Արցախ», № 2 (3), 2019, Երևան, ՍԵԳՄՄ հրատ., 2019, էջ 224-232:

2. Խաչատուրյան Վ., ՀՀ տնտեսության կառուցվածքային փոփոխությունները և դրանց գնահատումը, Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2019[3], Երևան «Տնտեսագետ» հրատ. 2019, էջ 58-70:

3. Խաչատուրյան Վ., Տնտեսական ռիսկերի կառավարման հիմնական խնդիրները ՀՀ ընդերքօգտագործման ոլորտում, ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա, «Աղետների ռիսկի կառավարման արդիական հարցեր» միջազգային գիտաժողով, Երևան 12-13 նոյեմբեր, 2019թ., էջ 118-126:

4. Խաչատուրյան Վ., Մարկոսյան Ա., Հարավկովկասյան հանրապետությունների տնտեսական անվտանգության մակարդակի գնահատման արդյունքները, «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի հիմնադրման 25-ամյակին նվիրված «Կառավարման ժամանակակից հիմնախնդիրները» 2-րդ միջազգային գիտաժողովի նյութեր, Եր., ՀՀ ՊԿԱ, 2019, էջ 71-85:

5. Khachaturyan V. G., Modern perceptions of the role of state, Bulletin of High Technology, N 3 (10) /2019, Shushi 2019, pp. 60-71.

6. Markosyan A. Kh., Khachaturyan V. G., Environmental regulation and economic growth: liberal approach, Bulletin of High Technology, N 3 (10) /2019, Shushi 2019, pp. 72-79.

7. Մարկոսյան Ա, Խաչատուրյան Վ., Մաթևոսյան Է., Ժամանակակից պետության տնտեսագիտություն. պետության և շուկայի նոր մարտահրավերները, Եր., «Անտարես» հրատ., 2019թ., 556 էջ:

ХАЧАТУРЯН ВААГН ГАРНИКОВИЧ

ОСНОВНЫЕ ПУТИ УЛУЧШЕНИЯ УПРАВЛЕНИЯ ОБЩЕСТВЕННЫМИ РЕСУРСАМИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ (НА ПРИМЕРЕ НЕДР И ВОДНЫХ РЕСУРСОВ)

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 - “Экономика, управление хозяйством и его сферами”.

Защита диссертации состоится 22 мая 2020 года, в 13^{30} часов, на заседании Специализированного совета по экономике 015 ВАК Республики Армения, действующего в Ереванском государственном университете, по адресу: 0009, г. Ереван, ул. Х. Абовяна 52.

Р Е З Ю М Е

В настоящее время в Республике Армения назрела острая необходимость системных изменений во всех сферах общественной жизни. Не случайно новое правительство Армении считает приоритетным проведение экономической революции, а это означает, прежде всего, радикальное изменение всей системы управления с целью повышения ее эффективности и обеспечения открытости, а также применения новых подходов и принципов управления. В первую очередь важна эффективность управления общественными ресурсами и, прежде всего, природными ресурсами, что в свою очередь, позволит обеспечить успех экономического развития страны в долгосрочной перспективе. Данное обстоятельство позволило сформулировать цель диссертационного исследования, которая состоит в выявлении текущих задач управления общественными ресурсами в РА, а также предоставлении рекомендаций о путях улучшения управления общественными ресурсами.

Для достижения цели диссертации были определены следующие задачи исследования:

- изучить современные представления о роли государства как основного общественного института;
- обсудить институциональные основы взаимодействия государства и рынка;
- рассмотреть экономическую безопасность Республики Армения в контексте государственно-рыночных отношений, предложить и обосновать подход расчета экономической безопасности, который позволит синхронизировать функции государства и рынка;
- выявить особенности регулирования спроса и предложения, а также их проявление в Республике Армения;
- проанализировать состояние горнодобывающей промышленности, как специфической сферы использования общественных ресурсов, и учесть ее влияние на экономику РА;

- проанализировать состояние использования водных ресурсов Республики Армения и выявить существующие проблемы в этой области;
- дать оценку структурным изменениям в экономике и тенденциям их развития;
- выявить основные пути повышения эффективности использования недр и предоставить рекомендации;
- предложить пути улучшения управления водными ресурсами и водными системами.

Основные положения научной новизны в работе заключаются в следующем:

1. обосновано расширение практики государственно-частного партнерства в Республике Армения на основе подхода «государство действует там (в тех областях), где частному сектору не выгодно», что позволяет достичь формирования наилучшего соотношения в управлении общественными ресурсами и, как следствие, ведет к повышению эффективности;

2. обосновано, что в настоящее время краеугольным камнем экономической политики в Республике Армения должно стать формирование экономики предложения, которая обеспечит улучшение как экономической активности, так и инвестиционной среды;

3. предложено применить принцип «загрязнитель платит» в горнодобывающей промышленности, что на практике означает включение затрат, связанных с ущербом, наносимым окружающей среде и его возмещением, в расходы недропользования, что в свою очередь позволит обеспечить экономическую эффективность и сохранить экологический баланс;

4. помимо форм, предусмотренных Водным кодексом РА по управлению государственными системами водоснабжения (доверительное управление, концессия, аренда, создание коммерческой организации, предоставление в безвозмездное пользование), предлагается предусмотреть законодательством новые, ранее не предусмотренные в Армении, формы: «строительство - владение - управление - передача», «строительство - управление - собственность» или «строительство - аренда - собственность», а также предоставление систем водоснабжения общинам на основе принципа долевого участия. Предлагается также не отдавать предпочтение той или иной форме передачи прав управления собственностью, обеспечив свободную конкуренцию для выбора форм управления, что после определенного периода времени приведет к оптимальному соотношению, основанному на принципе спроса и предложения.

VAHAGN GARNIK KHACHATURYAN

MAIN WAYS TO IMPROVE PUBLIC RESOURCE MANAGEMENT IN THE REPUBLIC OF ARMENIA (ON THE EXAMPLE OF SOIL AND WATER RESOURCES)

The summary of the dissertation for the pursuing of scientific degree of PhD in Economics in the field 08.00.02 - "Economics, Management of the Economy and its Branches"

The defense of the dissertation will take place at 13^{30}, on May 22-nd , 2020, at the Meeting of the Specialized Council 015 in Economics of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia acting at the Yerevan State University.
Address: 52 Abovyan str., Yerevan, 0009, Armenia

SUMMARY

Currently, there is an urgent need for systemic changes in all spheres of public life in the Republic of Armenia. It is no accident that the new government of Armenia considers the economic revolution to be a priority, and this means, first of all, a radical change in the entire management system in order to increase its effectiveness and ensure openness, as well as the application of new management approaches and principles. First of all, the effectiveness of managing public resources and, above all, natural resources is important, which in turn will ensure the success of the country's economic development in the long term. This circumstance made it possible to formulate the purpose of the dissertation research, which consists in identifying the current tasks of public resources management in the Republic of Armenia, as well as providing recommendations on ways to improve public resources management.

To achieve the goal of the dissertation, the following research tasks were identified:

- to study modern perceptions of ideas about the role of the state as the main public institution;
- to discuss the institutional foundations of interaction between the state and the market;
- to consider the economic security of the Republic of Armenia in the context of state-market relations, propose and justify an approach to calculating economic security that will enable the harmonization of state and market functions;
- to identify the peculiarities of demand and supply regulation, as well as their manifestation in the Republic of Armenia;
- to analyze the state of the mining industry as a specific sphere of using public resources, and take into account its impact on the economy of the Republic of Armenia;
- to analyze the state of water resources utilization of the Republic of Armenia and identify existing problems in this area;

- to evaluate structural changes in the economy and their development trends;
- to identify the main ways to increase the efficiency of soil utilization efficiency and make recommendations;
- to suggest ways to improve the management of water resources and water systems.

The study yielded scientific-practical results, the scientific innovation of which is:

Main scientific results of the study have theoretical and practical significance, scientific novelty of which is as follows:

1. Substantiated the expansion of the practice of public-private partnership in the Republic of Armenia, based on the “state works where (in areas) where the private sector is not profitable” approach, which allows to achieve the formation of the best balance in the management of public resources and, as a result, leads to an increase effectiveness;

2. It is substantiated that at present, the cornerstone of economic policy in the Republic of Armenia should be the supply economy, which will ensure the improvement of both economic activity and the investment environment;

3. It is proposed to apply the “polluter pays” principle in the mining industry, which in practice means the inclusion of costs associated with damage to the environment and its compensation in the costs of subsoil use, which in turn will ensure economic efficiency and maintain the ecological balance;

4. In addition to the forms provided for by the RA Water Code for the management of state water supply systems (trust management, concession, rent, creation of a commercial organization, provision for free use), it is proposed to envisage new forms not previously stipulated in Armenia by legislation: "Construction - Possession - Management - Transfer", "Construction - Management - Ownership" or "Construction - Lease - Ownership", as well as the provision of water supply systems to communities based on the principle of shared participation. It is also proposed not to give preference to one or another form of transfer of property management rights, providing free competition for the choice of management forms, which after a certain period of time will lead to an optimal ratio based on the principle of supply and demand.